2020 թ. ապրիլի 14–ին Արցախի Հանրապետության նախագահ է ընտրվել Արայիկ Հարությունյանը. շնորհավորում ենք

ՀԻՄՆԱԴԻՐ ԵՎ ՀՐԱՏԱՐԱԿԻՉ «ՍՅՈՒՆՅԱՑ ԱՇԽԱՐՀ»
ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ

ՏՊԱԳՐՎՈՒՄ Է 2003Թ. ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 1-ԻՑ

Հասցե՝ ՀՀ, Սյունիքի մարզ.ք.Կապան Շահումյան 20/32, 3301:
Հեռ.՝ (+374 285)5 25 63
(+374 91) 45 90 47
(+374 77) 45 90 47

Գրանցման վկայականը՝ 01Մ 000231:
Տպագրվում է «Տիգրան Մեծ» հրատարակչության տպարանում:
Հասցեն՝ ք. Երեւան, Արշակունյաց 2:
Ծավալը՝ 2 տպագրական մամուլ:
Տպաքանակը՝ 1000, գինը՝ 100 դրամ:

ISSN 1829-3468

ՉՈՐԵՔՇԱԲԹԻ, 15 ԱՊՐԻԼԻ 2020Թ.
№ 7 (523)

Սյունյաց Երկիր

www.syuniacyerkir.am

Սյունիքում կորոնավիրուսով հիվանդների թիվն ըստ տարածաշրջանների. Կապան՝ 15, Մեղրի՝ 9, Քաջարան՝ 1

Հանրապետությունում արտակարգ դրության ռեժիմը երկարաձգվել է 30 օրով՝ մինչեւ 2020թ. մայիսի 14-ը

Հայաստանի կառավարությունն արտահերթ նիստում հանրապետությունում 2020 թվականի մարտի 16-ին հայտարարված արտակարգ դրության ժամկետը 2020 թվականի ապրիլի 14-ից ժամը 17:00-ից՝ 30 օրով՝ մինչեւ 2020 թվականի մայիսի 14-ը ժամը 17:00-ն երկարաձգելու որոշում ընդունեց: Արդարադատության նախարար Ռուստամ Բադասյանը նշեց, որ ֆիզիկական եւ իրավաբանական անձանց անշարժ եւ շարժական գույքը կամ դրա մի մասը կարող են օգտագործվել արտակարգ դրության իրավական ռեժիմի ապահովման նպատակով:

Բացի այդ, արտակարգ դրության ընթացքում Հայաստանի Հանրապետության հարկադիր կատարումն ապահովող ծառայության համար սահմանափակվում է տեղական ինքնակառավարման մարմինների կողմից՝ Հայաստանի Հանրապետության վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգրքի 124.7-րդ հոդվածի հիմքով կայացված վարչական ակտերի, ինչպես նաեւ Հայաստանի Հանրապետության ոստիկանության «Ճանապարհային ոստիկանություն» ծառայության կողմից կայացված վարչական ակտերի հիման վրա «Վարչարարության հիմունքների եւ վարչական վարույթի մասին» օրենքի 88-րդ հոդվածի 4-րդ մասի պահանջների պահպանմամբ ներկայացված դիմումով 2020 թվականի ապրիլի 14-ից հետո հարուցված կատարողական վարույթներով պարտապանի գույքի վրա արգելանք դնելու լիազորությունը: Սույն կետով սահմանված հիմքերով չկիրառված արգելանքները ենթակա են կիրառման «Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» օրենքով սահմանված կարգով՝ արտակարգ դրությունը դադարելուց հետո:

«Նշածս սահմանափակումը վերաբերում է ՏԻՄ-երի կողմից սահմանված ավտոկայանատեղիի համար տուրքերը չվճարելու հիմքով կայացված ակտերի, ինչպես նաեւ Ճանապարհային ոստիկանության ակտերի հիման վրա հարուցված կատարողական վարույթներով կիրառվող արգելանքներին, եթե կատարողական վարույթը հարուցվել է 2020 թվականի ապրիլի 14-ից հետո: Չկիրառված արգելանքները կկիրառվեն արտակարգ դրության ավարտից հետո»,-պարզաբանում է նախարարը:

armenpress.am

Չծերանայինք, չծերանայինք,
Մեր ծերպ ու կերպից
չհեռանայինք,
Չսպիտակեինք
ժամանակից շուտ
Եվ մեր խորքի մեջ
չսեւանայինք:
Վաստակած քուրմեր
չձեւանայինք,
Մեկմեկու հիշել
չթերանայինք,
Չտես տերերի
ողորմածությամբ
Մեր տերության պես
չանտերանայինք:
Այս մենությանը
չընկերանայինք,
Այս գերությանը
չընտելանայինք,
Վերանում էինք... Գոնե մեր
մաքուր
Երեսի ջրով թող վերանայինք:

ՀԱՄՈ ՍԱՀՅԱՆ

Արցախում՝ արտակարգ իրավիճակ

Արցախի Հանրապետության նախագահի հրամանագիրը

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ ԱՐՏԱԿԱՐԳ ԻՐԱՎԻՃԱԿ ՀԱՅՏԱՐԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հաշվի առնելով աշխարհում եւ Հայաստանի Հանրապետությունում նոր կորոնավիրուսային հիվանդության (COVID-19, այսուհետ՝ վարակ) տարածման դեպքերը եւ այդ վարակն Առողջապահության համաշխարհային կազմակերպության գլխավոր տնօրենի՝ 2020 թվականի մարտի 11-ի հայտարարությամբ որպես պանդեմիա որակելու հանգամանքը, հաշվի առնելով նաեւ, որ չնայած նոր կորոնավիրուսային հիվանդության տարածման կանխարգելման եւ կորոնավիրուսի համաճարակի սպառնալիքից բնակչության պաշտպանության ուղղությամբ ձեռնարկված միջոցառումների արդյունքում տեւական ժամանակահատվածում Արցախի Հանրապետությունում վարակի դեպքեր չէին արձանագրվել, սակայն վերջերս վարակի արձանագրված դեպքերն անհրաժեշտություն են առաջացրել նոր լրացուցիչ քայլերի ձեռնարկման եւ միջոցառումների իրականացման, այդ թվում՝ ապրիլի 14-ին նախագահական ընտրությունների անցկացման ժամանակ, հիմք ընդունելով այն, որ Արցախի Հանրապետությունում վարակի տարածման հետեւանքով համաճարակային իրադրությունը՝ որպես համաճարակի հետեւանքով առաջացած արտակարգ իրավիճակ, սպառնում է բնակչության կյանքին եւ առողջությանը եւ կարող է հանգեցնել անձանց կենսագործունեության բնականոն պայմանների խախտման, ելնելով նման արտակարգ իրավիճակում մարդկանց կյանքի եւ առողջության ապահովման գերակայության սկզբունքից, ինչպես նաեւ համաճարակի կանխարգելման, համաճարակային իրադրության պայմաններում բնակչության պաշտպանության, բնակչության առողջության պահպանման եւ առողջական վիճակի բարելավման նպատակով սանիտարականխարգելիչ, կարանտինային հատուկ միջոցառումների, վարակի տարածումը կանխելու եւ վերացնելու հատուկ պայմաններ եւ ռեժիմ սահմանելու, ինչպես նաեւ բնակչության պաշտպանության կանխարգելիչ այլ աշխատանքների եւ միջոցառումների ժամանակին, պատշաճ, օպերատիվ, արդյունավետ կազմակերպման եւ իրականացման անհրաժեշտու-

էջ 2

Արցախում՝ արտակարգ իրավիճակ

Արցախի Հանրապետության նախագահի հրամանագիրը

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ ԱՐՏԱԿԱՐԳ ԻՐԱՎԻՃԱԿ ՀԱՅՏԱՐԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

էջ 1

թյունից, հաշվի առնելով, որ վարակի տարածմանն էականորեն նպաստում կամ կարող են նպաստել, իսկ կանխարգելմանը՝ խոչընդոտել այլ, այդ թվում՝ վարակված բնակչության բարձր ցուցանիշներ ունեցող երկրներից պոտենցիալ վարակակիր անձանց՝ Արցախի Հանրապետություն մուտք գործելու, Արցախի Հանրապետության տարածքում անձանց ազատ տեղաշարժվելու, հանրային միջոցառումներին մասնակցելու, համապատասխան կանխարգելիչ միջոցառումներ չիրականացնելու, իսկ ախտանիշների առկայության դեպքում՝ բժշկական զննություն չանցնելու հանգամանքները, հիմք ընդունելով այն, որ Արցախի Հանրապետության Սահմանադրության 93-րդ եւ 133-րդ հոդվածներն Արցախի Հանրապետության նախագահին լիազորում են երկրում արտակարգ իրավիճակ հայտարարել տարերային աղետի բնույթ ունեցող բնական կամ տեխնածին աղետների կանխարգելման, ինչպես նաեւ դրանց հետեւանքների վերացման նպատակով եւ այն, որ վարակի տարածումը զանգվածաբար սպառնում է մարդկանց կյանքին ու առողջությանը, եւ հաշվի առնելով Արցախի Հանրապետության Սահմանադրության 3-րդ հոդվածով սահմանված՝ մարդու՝ որպես բարձրագույն արժեք հանդիսանալու սահմանադրական կարգավիճակը, ինչը պետությանը պարտավորեցնում է միջոցներ ձեռնարկել անձանց կյանքի ու առողջության պաշտպանության համար, նկատի ունենալով այն, որ վարակի ներթափանցման եւ վարակված անձանց առկայության եւ նրանց թվի ավելացման պայմաններում համապատասխան կանխարգելիչ աշխատանքների եւ միջոցառումների իրականացումը եւ դրանց արդյունքում անձանց կյանքի եւ առողջության պաշտպանությունը հնարավոր չի լինի ապահովել առանց Արցախի Հանրապետության Սահմանադրությամբ երաշխավորված՝ մարդու եւ քաղաքացու հիմնական իրավունքների եւ ազատությունների սահմանափակման, մասնավորապես՝ անձնական ազատության (27-րդ հոդված), ազատ տեղաշարժվելու իրավունքի (40-րդ հոդված), հավաքների ազատության (44-րդ հոդված), սեփականության իրավունքի (60-րդ հոդված) եւ արտակարգ իրավիճակի ժամանակ Արցախի Հանրապետության Սահմանադրությամբ սահմանափակման ենթակա այլ իրավունքները եւ ազատությունները՝ իրավիճակի պահանջով եւ օրենքով սահմանված կարգով ժամանակավորապես կասեցնելու կամ լրացուցիչ սահմանափակումների ենթարկելու, եւ ղեկավարվելով Արցախի Հանրապետության Սահմանադրության 93-րդ հոդվածի 20-րդ կետով, 133-րդ հոդվածի 1-ին մասով եւ «Արտակարգ իրավիճակներում բնակչության պաշտպանության մասին» օրենքի 1-ին եւ 5-րդ հոդվածներով՝ որոշում եմ.

1. Արցախի Հանրապետության ամբողջ տարածքում 2020 թվականի ապրիլի 12-ից, ժամը 22:00-ից սկսած մինչեւ 2020 թվականի մայիսի 12-ը, ժամը 22:00-ը ներառյալ ժամկետով հայտարարել արտակարգ իրավիճակ:
2. Արտակարգ իրավիճակի իրավական ռեժիմն ապահովող ուժերի եւ միջոցների միասնական ղեկավարումն իրականացնելու նպատակով ստեղծել պարետատուն (այսուհետ՝ Պարետատուն): Պարետատան ղեկավարման համար պարետ նշանակել Արցախի Հանրապետության պետական նախարար Գրիգորի Մարտիրոսյանին (այսուհետ՝ Պարետ):
3. Պարետատան կազմում ի պաշտոնե ընդգրկվում են Արցախի Հանրապետության առողջապահության, գյուղատնտեսության, էկոնոմիկայի եւ արտադրական ենթակառուցվածքների, ֆինանսների, պաշտպանության նախարարները, Արցախի Հանրապետության ոստիկանության պետը, ազգային անվտանգության ծառայության տնօրենը, արտակարգ իրավիճակների պետական ծառայության տնօրենը, Արցախի Հանրապետության նախագահի աշխատակազմի կառավարության գործերի կառավարչության պետաշխատակազմի ղեկավարի 1-ին տեղակալը եւ Արցախի Հանրապետության առողջապահության նախարարության պետական հիգիենիկ եւ հակահամաճարակային տեսչության պետը:
4. Պարետատան աշխատանքների սպասարկումն ապահովում են Արցախի Հանրապետության պետական նախարարի աշխատակազմը եւ Արցախի Հանրապետության նախագահի աշխատակազմի կառավարության գործերի կառավարչությունը:
5. Պարետի հրավերով Պարետատան աշխատանքներին կարող են մասնակցել պետական մարմինների, կազմակերպությունների ղեկավարներ կամ ներկայացուցիչներ, Արցախի Հանրապետության շրջանների վարչակազմերի ղեկավարներ, համայնքների ղեկավարներ:
6. Պարետի ցուցումները պարտադիր են Պարետատան կազմի, պետական կառավարման մարմինների ղեկավարների եւ ներկայացուցիչների, ինչպես նաեւ արտակարգ իրավիճակի իրավական ռեժիմն ապահովելու նպատակով օգտագործվող ոստիկանության, ազգային անվտանգության ծառայության, պաշտպանության նախարարության, արտակարգ իրավիճակների պետական ծառայության ուժերի, տարածքային կառավարման եւ տեղական ինքնակառավարման մարմինների համար:
7. Սահմանել արտակարգ իրավիճակի ժամանակ կիրառվող միջոցառումները եւ իրավունքների ու ազատությունների ժամանակավոր սահմանափակումները, արտակարգ իրավիճակի իրավական ռեժիմն ապահովող միջոցները՝ համաձայն հավելվածի:
8. Սահմանել, որ արտակարգ իրավիճակի շրջանակներում կիրառվող միջոցառումները եւ իրավունքների ու ազատությունների ժամանակավոր սահմանափակումները, հաշվի առնելով համաչափության սկզբունքը, կիրառվում են Արցախի Հանրապետության ողջ տարածքում կամ Պարետատան կողմից որոշված տարածքների սահմաններում: Արտակարգ իրավիճակի շրջանակներում կիրառվող միջոցառումների իրականացման եւ իրավունքների ու ազատությունների ժամանակավոր սահմանափակումների կիրառումն ապահովելու համար Պարետի ցուցումով կարող են ներգրավվել արտակարգ իրավիճակի իրավական ռեժիմն ապահովող՝ ոստիկանության, ազգային անվտանգության ծառայության, պաշտպանության նախարարության եւ արտակարգ իրավիճակների պետական ծառայության ուժերն ու միջոցները, ինչպես նաեւ տարածքային կառավարման եւ տեղական ինքնակառավարման մարմինների աշխատակազմերի ներկայացուցիչները:
9. Սույն հրամանագիրն ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

Բ. ՍԱՀԱԿՅԱՆ

Արցախի Հանրապետության նախագահ Արայիկ Վլադիմիրի Հարությունյան

Ծնվել է 1973թ. 14 դեկտեմբերի, ԱՀ Ք. Ստեփանակերտ:
1990-1994թթ. սովորել եւ ավարտել է Երեւանի ժողտնտեսության ինստիտուտում:
1994թ. տեղափոխվել եւ 1995թ. ավարտել է Արցախի պետական համալսարանի տնտեսագիտական ֆակուլտետը:
1996-1998թթ. -Արցախի պետական համալսարանի ասպիրանտուրա՝ «Տնտեսագիտություն» մասնագիտություն:
2013թ. պաշտպանել է ատենախոսություն, դարձել տեխնիկական գիտությունների թեկնածու:
1995-1997թթ.- ԼՂՀ էկոնոմիկայի եւ ֆինանսների նախարարի օգնական:
1997-1999թթ.- «Հայագրոբանկի» Ասկերանի մասնաճյուղի կառավարիչ:
1999-2004թթ. -«Հայագրոբանկի» Ստեփանակերտի մասնաճյուղի կառավարիչ:
2005-2006թթ.- «Ազատ Հայրենիք» կուսակցության համանախագահ:
2006-2007թթ.-ից. եւ ապա՝ 2009թ.-ից առ այսօր, «Ազատ Հայրենիք» կուսակցության նախագահ:
2005-2007թթ. -ԼՂՀ Ազգային ժողովի պատգամավոր, «Հայրենիք» խմբակցության ղեկավար, խորհրդարանի ֆինանսա-

Չորս տարի առաջ՝ 2016-ին, 13 այունեցի նահատակվեց քառօրյա պատերազմում. լույս իջնի նրանց շիրմին

Մայիս Միրզոյան

Արմեն Բեգլարյան

Սեդրակ Ասրյան

Սերգեյ Դանղյան

Դավիթ Սարգսյան

Եղիշե Նիկալյան

Էդուարդ Ալեքսանյան

Կարո Համբարձումյան

Արմեն Հովհաննիսյան

Գագիկ Փարսադանյան

Արմեն Գասպարյան

Նորիկ Գասպարյան

Նարեկ Մկրտչյան

Բյուջետային եւ տնտեսական կառավարման հարցերի մշտական հանձնաժողովի նախագահ:
2006-2007թթ.- «Ղարաբաղ գոլդ» ՓԲԸ գործադիր տնօրեն:
2007թ. սեպտեմբերի 14-ին ԼՂՀ նախագահի հրամանագրով նշանակվել է ԼՂՀ վարչապետ:
2012թ. սեպտեմբերի 14-ին ԼՂՀ նախագահի հրամանագրով նշանակվել է ԼՂՀ վարչապետ:
2017թ. սեպտեմբերի 25-ի Արցախի Հանրապետության նախագահի հրամանագրով նշանակվել է ԱՀ պետնախարար:
Զինապարտ է:
1992թ. - անդամագրվել է ԼՂՀ ինքնապաշտպանության ուժերին եւ ակտիվ մասնակցություն ունեցել պատերազմական գործողություններին:
Պարգեւատրվել է «Շուշիի ազատագրման համար» մեդալով եւ «Մարտական խաչ» II աստիճանի շքանշանով:
ԼՂՀ նախագահի 2016թ. օգոստոսի 30-ի հրամանագրով՝ Ա. Հարությունյանը պարգեւատրվել է «Գրիգոր Լուսավորիչ» շքանշանով՝ Լեռնային Ղարաբաղի Հանրապետությանը մատուցած բացառիկ ծառայությունների համար եւ ի նշանավորումն Լեռնային Ղարաբաղի Հանրապետության հռչակման 25-րդ տարեդարձի:
«Ազատ Հայրենիք» կուսակցության նախագահ:
Ամուսնացած է, ունի երեք դուստր: ■

Կորոնավիրուսի ախտորոշիչ թեստեր՝ Կապանի բժշկական կենտրոնին

«Չաարատ Կապան» ՓԲ ընկերությունը ձեռք է բերել նոր տիպի կորոնավիրուսի ախտորոշիչ 2019-nCOV IgG/IgM ռապիտ թեստեր, որոնք անհապուշ տրամադրվեց Կապանի բժշկական կենտրոնին՝ անհրաժեշտության դեպքում դրանք կիրառելու թե՛ համայնքի բնակիչների եւ թե՛ մեր աշխատակիցների համար:

Բժշկական կենտրոնի տնօրեն Կարեն Մելքոնյանի խոսքով՝ արագ թեստերի օգնությամբ հնարավոր կլինի կանխել վարակի տարածումը: Այն ապահովում է 92 տոկոս ճշգրտություն եւ անհայտ հիվանդի դեպքում, որ դեռեւս պարզ չէ, թե որ օջախից է ներգրավվել, հիվանդանոց կամ պոլիկլինիկա դիմելու դեպքում առաջնահերթ կկատարվի թեստավորում ու հնարավոր կասկածի առկայության դեպքում կարվեն այլ հետազոտություններ՝ կանխելով հնարավորինս շատ թվով մարդկանց ներգրավվածությունն ու վարակվելու ռիսկերը: Թեստերը հասանելի են լինելու Կապանի պոլիկլինիկայում եւ հիվանդանոցում, որոնք անվճար կիրականացվեն վարակի ախտանիշ ունեցող բնակիչներին:

Ընկերությունն ախտորոշիչ թեստեր հանձնեց նաեւ «Սյունիքի մարզային նյարդաբուժական դիսպանսեր» ՓԲԸ-ին:

Ընկերությունն աշխատանքներ է տանում նոր թեստերի ձեռքբերման գործում, որոնք կրկին անվճար կտրամադրվեն բժշկական կենտրոնին:

Արդեն մեկ ամիս է, «Չաարատ Կապան» ՓԲ ընկերության ղեկավարության ուշադրության կենտրոնում է հանրային առողջությունն ու աշխատակիցների անվտանգության պահպանումը, որին ուղղված ընկերությունն իրականացնում է տարատեսակ ծրագրեր Կապան համայնքում: Ընկերությունն այս ամիսներին արդեն նախատեսված մի շարք ծրագրեր է հետաձգել՝ ամբողջ կենտրոնացումն ուղղելով կորոնավիրուսի կանխարգելմանը:

Այս օրերին ընկերության աշխատակիցները կացարանների բարեկարգման աշխատանքներ են իրականացրել նաեւ ՀՀ ոստիկանության Սյունիքի մարզային վարչության աշխատակիցների համար, ովքեր ծառայությունից հետո, հաշվի առնելով նրանց աշխատանքի առանձնահատկությունը եւ շփման ծավալները՝ իրենց ընտանիքների անվտանգությունն ապահովելու եւ հնարավոր վարակը չտարածելու համար, ժամանակավորապես կապրեն այդ կացարաններում:

Մենք վստահ ենք, որ համատեղ ուժերով շուտով հաղթահարելու ենք այս դժվարին ժամանակահատվածը: Առողջ եղեք:

«Չաարատ Կապան» ՓԲԸ

«Չաարատ Կապան»-ը դժվարին այս օրերին՝ կրկին կապանցիներ հեպ

«Չաարատ Կապան» ՓԲ ընկերության ենթակառուցվածքային ծառայությունների բաժնի շինարարները Կապանի բժշկական կենտրոնում շիններոգման աշխատանքներ են իրականացրել: Ինչպես «Սյունյաց երկրին» տեղեկացրեց Կապանի բժշկական կենտրոնի տնօրեն Կարեն Մելքոնյանը, կենտրոնի նախկին վիրաբուժական մասնաշենքի առաջին եւ երկրորդ հարկերի նորոգումից հետո կունենան ինֆեկցիոն նոր բաժին, որ կսպասարկի կորոնավիրուսով վարակված մոտ 50 մարդու:

Մարտի 31-ի գիշերը մասնաշենքում 22-25 մարդ էր աշխատում: Ապրիլի 1-ի կեսօրին կատարվածին ծանոթանալու համար շիններոգումն իրականացնողներին այցելեց «Չաարատ Կապան» ընկերության գլխավոր տնօրեն Դավիթ Թովմասյանը: Նրա փոխանցմամբ՝ կորոնավիրուսի նման արագ տարածվածությունն անհանգստացնում է նաեւ կոմբինատի անձնակազմին, եւ անհապաղ իրենց օգնությունն առաջարկեցին Կապանի բժշկական կենտրոնին: Բացի այդ, իրենք սոցիալական պարտավորություններ ունեն Կապան խոշորացված համայնքի հանդեպ եւ միշտ նրա կողքին կանգնած են լինելու:

Կոմբինատի ենթակառուցվածքային ծառայությունների տնօրենի պաշտոնակատար Հայկ Եսայանը մանրամասնեց կատարված աշխատանքները. ջրատաքացուցիչներով սանհանգույցներ են տեղադրել, ենթակայանից մասնաշենք ձգվող գլխավոր մալուխն է փոխվել, շենքում հոսանքատար լարերն ու ջրախողովակներն են փոխվում: Աշխատանքները շարունակվելու են մինչեւ այն պահը, երբ բաժանմունքը կընդունի առաջին հիվանդին:

Կոմբինատը բժշկական կենտրոնին հատկացրել է բազմաֆունկցիոնալ մահճակալներ, դիմակներ, ալկոգել, այլ պարագաներ:

Զրույցի ավարտին Կապանի բժշկական կենտրոնի տնօրեն Կարեն Մելքոնյանը հորդորեց մեր համաքաղաքացիներին՝ հետեւել հիգիենայի կանոններին, այդ խնդրին չափազանց լուրջ մոտենալ, ինչի շնորհիվ միայն դրական արդյունք կարելի է ակնկալել: Նաեւ հավելեց, որ հիմնանորոգված մասնաշենքում լինելու է վերակենդանացման բաժանմունք, շուտով ստանալու են արհեստական շնչառական սարքեր՝ նվիրատվության կարգով:

ՎԱՀՐԱՄ ՕՐԲԵԼՅԱՆ
03 ապրիլի 2020թ.

Համակարգիչներ՝ «Չաարատ Կապան»-ից

«Չաարատ Կապան» ՓԲ ընկերությունը Սյունիքի մարզպետարանին է նվիրաբերել 15 համակարգիչ. դրանք կտրամադրվեն մարզի այն աշակերտներին, ովքեր տեխնիկական միջոցների բացակայության պատճառով դուրս են մնացել հեռավար ուսուցումից:

Հուսանք՝ օրինակը «վարակիչ» կլինի մեր մարզում նման հնարավորություններ ունեցող այլ կազմակերպությունների ու անհատների համար:

Սյունիքի մարզպետարան
Syunik Regional Administration

Հունան Պողոսյան. «Հորդորում եմ, որ բոլորն ունենան ողջամիտ անհանգստություն եւ ոչ թե խուճապ»

«Սյունյաց երկրի» հարցերին պատասխանում է Սյունիքի մարզպետ Հունան Պողոսյանը

Պարոն մարզպետ, հանրային ընկալման մեջ տպավորություն կա, որ մարզային եւ համայնքային իշխանությունները դժվարին մեր օրերում ինքնամեկուսացված են: Եվ, այդուհանդերձ, ընթերցողին հետաքրքրում է՝ ի՞նչ ռիթմով են աշխատում մարզպետարանը, համայնքապետարանները, ի՞նչ խնդիրներ են կառավարման այդ օղակները լուծում արտակարգ դրության պայմաններում:

– Ճիշտն ասած, ես նման բան չեմ լսել ու չեմ էլ զգացել: Օրվա ընթացքում առնվազն մեկ-երկու անգամ շրջում եմ Կապանում, ինարավորինս շփվում քաղաքացիների հետ եւ որեւէ մեկի կողմից նման հարցադրում չեմ լսել: Ճիշտ հակառակը՝ բոլորը գոհունակություն են հայտնում: Աշխատում ենք ամենալարված ռիթմով, թեպետ մարզպետարանում, օրինակ, նվազագույնի ենք հասցրել աշխատակիցների թիվը, մեծ մասն աշխատում է հեռավար մեթոդով, ու դա արդարացված է եւ իրենց, եւ շրջապատի համար:

Նույն ռեժիմով եւ սկզբունքով աշխատում են մարզի համայնքապետարանները, որոնց գործունեությունը համակարգվում է մարզպետարանի կողմից:

Ու այդ գործելակերպը շատ օպերատիվ է ստացվում եւ ինարավորինս՝ արդյունավետ:

Ստեղծված իրավիճակում անհրաժեշտություն չկա աշխատակազմի բոլոր աշխատակիցներին կանչել, այս պահին ինքներդ էլ տեսնում եք՝ մարզպետարանի շենքում հաշվված մարդիկ են, մյուսները տնից են աշխատում, եւ դրանից բնավ աշխատանքը չի տուժում՝ ո՛չ գրագրությունը, ո՛չ փաստաթղթաշրջանառությունը:

Անշուշտ, երկրում հայտարարված է արտակարգ դրություն, պետական կառավարման մի շարք գործառույթներ վերապահված են պարետատանը: Միգուցե հենց այդ հանգամանքն է, որ տարածքային եւ տեղական կառավարման մարմինների պասիվության տպավորություն են թողնում, ինչը, կարծում եմ, սուբյեկտիվ ընկալում է:

– **Սյունիքի մարզում է գտնվում հանրապետությունն աշխարհին կապող կարեւոր դարպասներից մեկը, ինչը եւ որոշակի առաքելություն է դնում մարզի ու մարզային իշխանությունների վրա: Մասնավորապես՝ արտակարգ դրության պայմաններում բեռնափոխադրումների խնդիրն առավել քան կարեւոր է հանրապետության կենսագործունեության համար: Ինչպե՞ս է այն իրականացվում, որքանո՞վ են չեզոքացվում դրանից բխող ռիսկերը:**

– Բեռնափոխադրումների հատուկ աշխատակարգ է սահմանված. երկու մեթոդով ենք աշխատում: Նախ՝ Իրանի Իսլամական Հանրապետության եւ Հայաստանի Հանրապետության սահմանում ՀՀ առողջապահության նախարարության համապատասխան ծառայություններն իրականացնում են իրենց վերապահված գործառույթները՝ սկսած կանխարգելիչ աշխատանքներից: Ինչ վերաբերում է բեռնափոխադրումներին, այս պահին՝ արտակարգ դրության պայմաններում, գործում է երկու տարբերակ: Նախ՝ փոխաբեռնման ենթակա ապրանքները, այսինքն՝ այն ապրանքները, որոնք հնարավոր է իրանական բեռնատարներից փոխադրել մեր բեռնատարների վրա (Մեղրիի մաքսակետի կամ «Ագարակ տերմինալ» ՍՊԸ մաքսային հսկողության տարածքում), փոխադրվում են:

Երկրորդ տարբերակը. եթե հնարավոր չէ ապրանքները փոխադրել այլ բեռնատարի մեջ, ապա բեռնափոխադրումը թույլատրվում է ՀՀ պետական եկամուտների կոմիտեի գրավոր համաձայնությամբ, իսկ տեղաշարժը հանրապետության ողջ տարածքում եւ բեռնաթափումից հետո (նաեւ տրանսպորտային միջոցի վերադարձն Իրան), իրականացվում է ոստիկանության ուժերի հսկողությամբ, իսկ այդ ամենը համակարգվում է, ինչպես ասացի, ՀՀ առողջապահության նախարարության համապատասխան ծառայությունների կողմից:

– **Ի դեպ, Մեղրու մասին տարբեր եւ իրարամերժ խոսակցություններ են շրջանառվում, մինչդեռ պաշտոնական տեղեկատվությունն այդ տարածաշրջանի մասին սուղ է կամ գրեթե չկա: Գաղտնիք չէ, որ Սյունիքի մարզում կորոնավիրուսով վարակվելու առաջին դեպքը կամ առաջին օջախը Մեղրիում է եղել: Կուզենայինք որոշակի տեղեկություններ ստանալ այդ շրջանի մասին:**

– Նախ՝ սկսեմ նրանից, որ ոչ մի ասեկոսեի չպիտի հավատալ, պետք է հետեւել պաշտոնական լրահոսին: Վստահաբար ասում եմ, որ ոչինչ չի թաքցվում եւ ապագայում չի թաքցվելու: Ավելի թափանցիկ, ավելի հրապարակային գործելակերպ, քան մեր իշխանություններն են այս պահին որդեգրել, ոչ մի տեղ չեմ տեսնում:

Միեւնույն ժամանակ՝ համաձայն չեմ, որ Սյունիքում ամեն ինչ Մեղրուց սկսվեց:

Փորձենք իրերը կոչել իրենց անուններով. Մեղրու բնակիչը, եթե չեմ սխալվում, հարսանեկան ճամփորդության էր մեկնել Իտալիա, որտեղից վերադառնալով՝ նրա մոտ հայտնաբերվեց կորոնավիրուսով վարակված լինելու փաստը: Հետո վարակվելու դեպք հայտնաբերվեց նրա հետ շփված անձի մոտ՝ Կապանի վարչական տարածքում՝ գազալցակայանում:

Այնուհետեւ՝ կորոնավիրուս հայտնաբերվեց Ռուսաստանի Դաշնությունից տեղափոխված մեր հայրենակցուհու մոտ...

Արդյունքում՝ Սյունիքում կորոնավիրուսով վարակվածության 25 դեպքերն ունեն ծագման երեք օջախ՝ չնչին բացառություններով:

Որպեսզի հիվանդների վիճակագրության թեման շահարկման նյութ չդառնա, նշեմ, որ 25 հիվանդից երկուսն արդեն առողջացել է:

Հիմա՝ հիվանդների թիվն ըստ տարածաշրջանների՝ Կապան՝ 15, Մեղրի՝ 9, Քաջարան՝ 1:

Ընդ որում՝ վեցը Երեւան է տեղափոխվել: Հիվանդներից մեկը բուժվել է մայրաքաղաքում, մյուսը՝ Կապանի բժշկական կենտրոնում:

Մեկուսացվածների մասին. այս պահին ունենք մեկուսացված 13 անձ (հարցազրույցը կայացել է ապրիլի 9-ին, խմբ.): Իհարկե, սրանք անընդհատ փոփոխվող թվեր են: Երբ մեկուսացման 14 օրը լրանում է, ոչ մի ախտանիշ չունեցող մարդը վերադառնում է բնականոն կյանք:

Այս համատեքստում կուզենայի երախտագիտությունս հայտնել մարզի բոլոր բուժաշխատողներին՝ «Շտապ օգնության» վարորդներից մինչեւ սանիտարուհիներ՝ իրենց նվիրումի, եթե կուզեք, խիզախության համար, ովքեր, մանավանդ բուժաշխատողները, վտանգելով իրենց՝ փրկում են ուրիշների կյանքը:

– **Հավանաբար այլ մոտեցում է պահանջվում այն մարդկանց հանդեպ, ովքեր համաճարակին բնորոշ ախտանիշներ են ունենում առերեւույթ կամ կասկածվում են դրանք ունենալու մեջ: Կարո՞ղ ենք արձանագրել, որ նման մարդիկ պարտադիր կարգով թեստավորվում են:**

– Թեստավորում կատարվում է այն սկզբունքով, ինչպես բոլոր տեղերում՝ ըստ անհրաժեշտության՝ հիվանդությունների վերահսկման եւ կանխարգելման ազգային կենտրոնի կողմից՝ հաշվի առնելով մարզի բժշկական կենտրոններից ստացվող ահազանգերը:

Կարող ենք փաստել, որ ապրիլի 3-ից հետո կորոնավիրուսով վարակվելու հաստատված դեպք մարզի բնակչության շրջանում չի գրանցվել:

Այս պարագայում կրկին կոչ եմ անում մարզի բնակչությանը՝ մնալ տանը եւ տնից դուրս գալ ծայրահեղ անհրաժեշտության դեպքում, նաեւ պահպանել հիգիենայի տարրական կանոնները, կատարել մասնագետների խորհուրդ-պահանջները՝ կրել դիմակ, հագնել ձեռնոց, օգտագործել ախտահանիչ միջոցներ, պահպանել սոցիալական հեռավորություն:

– **Հաջորդ հարցս աշխատաշուկային է վերաբերում. կա՞մ վիճակագրություն, թե մարզում քանի մարդ է գործազուրկ դարձել այս օրերին եւ , ընդհանրապես, զբաղվածության ի՞նչ նոր իրավիճակի հետ գործ ունենք Սյունիքում:**

– Մարզի աշխատաշուկայում վերջին շրջանում կատարված փոփոխությունների վիճակագրություն, որպես այդպիսին, չկա:

Սյունիքում աշխատուժը հիմնականում կենտրոնացված է լեռնահանքային երեք ընկերությունում եւ գյուղատնտեսության մեջ: Այդ ոլորտներում հիմնականում խնդիրներ չկան, որովհետեւ կոմբինատները բնականոն հունով գործում են, գյուղատնտեսական աշխատանքները նորմալ ընթանում են: Նույնիսկ խնդիրներ չծագեցին մեր այն հայրենակիցների համար, ովքեր գյուղատնտեսական աշխատանքներով են (անասնապահություն, հողագործություն, մեղվաբուծություն) զբաղվում Արցախի Հանրապետությունում:

– **Ի՞նչ է կատարվում մանրածախ առեւտրի շուկայում. այդ հարցը մտահոգում է յուրաքանչյուր ընտանիքի:**

Հետաքրքիր է՝ Սյունիքում առաջին անհրաժեշտության ո՞ր ապրանքատեսակների գնա՞ծ է տեղի ունեցել:

– Տեսչական մարմինները պարբերաբար ստուգայցեր են կատարում, մոնիթորինգի արդյունքները ներկայացնում ինչպես մարզպետարան, այնպես էլ իրենց վերադասին:

Այսպես ձեւակերպեմ՝ մանրածախ առեւտրի՝ տեղում գործող կետերն ապրանքի գին անհիմն չեն բարձրացրել: Եթե ոսպի եւ հնդկաձավարի գները, օրինակ, որոշ չափով բարձրացել են, ապա դա պայմանավորված է մատակարարով:

Տեղի շուկայում պարենային ապրանքների գների անհիմն բարձրացնելու դեպք չի եղել:

– **Արտակարգ դրության ռեժիմի սահմանումը զուգադիպեց գարնան-գյուղատնտեսական աշխատանքներին: Եթե մի քիչ էլ գյուղացին հապաղի, անդառնալիորեն ուշ է լինելու: Ի՞նչ է կատարվում գարնանացանի առումով, թեեւ Դուք արդեն նշեցիք, որ գարնան-դաշտային աշխատանքներում դժվարություններ չկան:**

– Սյունիքի գյուղատնտեսության ոլորտում ամեն ինչ բնականոն հունով է ընթանում, արվել է հնարավորը, որ եւ աշնանացանը պատշաճ կատարվի, եւ գարնանային մշակաբույսերի ցանքսն իրականացվի:

Հովտային շրջանում գրեթե խնդիր չունենք: Բայց վերջին երկու օրվա տեղումները՝ ձյան տեսքով, ջերմաստիճանի կտրուկ անկումը նախալեռնային եւ լեռնային գոտիներում, ցրտահարության վտանգ են առաջ բերել: Այդ ուղղությամբ եւս մոնիթորինգ ենք արել, ներկայացրել եւ տարածքային կառավարման ու ենթակառուցվածքների նախարարություն, եւ էկոնոմիկայի նախարարություն, նաեւ զրույց եմ ունեցել ոլորտի նախարարների հետ: Հայտնի է, որ Գորիսի եւ Սիսիանի մի շարք բնակավայրերում անցած երկու գիշերն օդի եւ հողի մակերեւույթին ջերմաստիճանը զրոյից ցածր է եղել: Տեսնենք՝ ինչ ցույց կտան ուսումնասիրությունները:

Այդ բոլորով հանդերձ՝ կան խնդիրներ, որոնք արտակարգ դրության ռեժիմի հետ բացարձակ կապ չունեն, որոնցով եւ մենք զբաղվում ենք:

Ինչ վերաբերում է աշնանացանի իրական պատկերին, ապա այն պարզ կդառնա ցրտահարության վնասները հաշվարկելուց հետո:

> *...Մանրածախ առեւտրի՝ տեղում գործող կետերն ապրանքի գին անհիմն չեն բարձրացրել: Եթե ոսպի եւ հնդկաձավարի գները, օրինակ, որոշ չափով բարձրացել են, ապա դա պայմանավորված է մատակարարով:*

Գեւորգ Փարսյան. «Կապանի համայնքապետարանը գործում է իրավիճակի ամբողջ լրջության գիտակցումով եւ դրանից բխող պատասխանատվության զգացումով»

«Սյունյաց երկրի» հարցերին պատասխանում է Կապան խոշորացված համայնքի ղեկավար Գեւորգ Փարսյանը:

– Պարոն Փարսյան, մեր պայմանավորվածությունից երկու ժամ հետո ենք սկսում զրույցը, չենք կասկածում, որ շատ կարեւոր գործով էիք զբաղված: Եթե գաղտնիք չէ, ինչո՞վ:

– Ոչ մի գաղտնիք էլ չկա, զբաղված էի մեր բուժաշխատողների տեղավորման խնդրով: Կապանի բժշկական կենտրոնի բուժաշխատողները հերթապահությունից հետո պիտի ինքնամեկուսանան: Նրանք 14 օր խնամել են վիրուսակիր հիվանդներին, հերթափոխը հանձնելուց հետո պիտի 14 օր ինքնամեկուսանան, այսինքն՝ այն բուժաշխատողները, ովքեր հիվանդներին խնամելուց հետո թեստավորվել են եւ արդյունքը բացասական է եղել, միեւնույն է, պիտի մեկուսանան...

Եվ այդ մեկուսացման տեղը հնարավորինս հարմարավետ ու ապահով պիտի լինի, օրինակ՝ հյուրանոցում: Նրանց համար տեղեր է հատկացվել «Դարիստ» հյուրանոցային համալիրում, ինչի համար շնորհակալություն եմ հայտնում Մուրազ Գրիգորյանին, ով արձագանքեց մեր խնդրանքին եւ պատրաստակամություն հայտնեց օգտակար լինել մեզ: Միասին ուսումնասիրեցինք հարմարությունները, առանձնացվեց հինգ սենյակ...

– Արտակարգ դրության պայմաններում ի՞նչն է առավել հուզում համայնքապետ Գեւորգ Փարսյանին, ինչպիսի՞ն է իրավիճակը Կապանում:

– Բնականաբար, մեր մտահոգություններն ու մտածումներն ուղղված են այն բանին, որ վարակի քիչ դեպքեր ունենանք, որ համայնքի որեւէ բնակչի կյանքին կամ առողջությանը վտանգ չսպառնա:

– Այս համատեքստում ինչպե՞ս կգնահատեք կապանցիների վարքն արտակարգ իրավիճակի պայմաններում, հետեւո՞ւմ են արդյոք փողոց դուրս չգալու կոչերին, ըստ պատշաճի կատարո՞ւմ են սանիտարահիգիենիկ պահանջները:

– Մարդիկ հիմնականում կատարում են պարետատան, առողջապահության նախարարության ցուցումները, իհարկե, կան բարձրացավ նրանց պատասխանատվության զգացումը: Եվ այս պահին, եթե դուրս գանք ու շրջենք Կապանում, կնկատենք՝ մարդիկ հիմնականում տներում են:

Իմ հանձնարարությամբ ստեղծվել է երեք խումբ, որոնցից երկուսը ղեկավարում են համայնքապետի երկու տեղակալը, երրորդը՝ համայնքապետարանի անվտանգության պատասխանատուն: Այդ խմբերը պարբերաբար շրջայցեր են կատարում քաղաքով մեկ, փողոցում անհարկի գտնվողներին հորդորում վերադառնալ տուն, պահանջում կատարել պարետատան պահանջները:

– Հետաքրքիր է՝ Կապան խոշորացված համայնքի գյուղական բնակավայրերի բնակիչներն ի՞նչ կյանքով են ապրում, գարնան-գյուղատնտեսական աշխատանքների եռուն շրջան է, դարձյալ գյուղացին մենակ է մնացել իր հոգսերի հետ: Սերմը ժամանակին պետք է գցել հողի մեջ, այլապես ակնկալվող բերքը չեն ստանա:

– Ասեմ, որ ոչ մի դեպքում չեն կանգնել գարնան-գյուղատնտեսական աշխատանքները, հատկապես գարնանացանը եւ այգիների մշակությունը: Յուրաքանչյուր ոք բանջարանոցում, հողամասում իր գործն է անում, եւ դա, գիտե՞ք, դրական կողմ ունի մեկ այլ առումով եւս՝ մարդիկ չեն հավաքվում իրար գլխի:

Այնպես որ, կարող ենք փաստել՝ արտակարգ դրությունը որեւէ կերպ չի անդրադառնում գարնան-գյուղատնտեսական աշխատանքների վրա, ոչ էլ գյուղացու հոգեվիճակի վրա: Բարեբախտաբար, Կապանի գյուղական բնակավայրերում կորոնավիրուսով վարակված չունենք: Ինչպես ասում են՝ սատանայի ականջը խուլ:

Տեղեկացնեմ, որ գյուղական բնակավայրերի վարչական ղեկավարներին հանձնարարված է պատրաստ լինել իրաքաղաքացիներ, ովքեր անլուրջ են վերաբերվում ստեղծված իրավիճակին, նմանների հետ բացատրական աշխատանքներ են տարվում: Ասեմ, որ սկզբնական շրջանում մարդկանց մեջ որոշ անլրջություն նկատվեց, բայց աստիճանաբար գիտակցեցին պահի լրջությունը, էականորեն վիճակի զարգացման ամեն մի սցենարի: Իսկ հիմա հետեւում են, որ գյուղաբնակները հնարավորինս քիչ ելումուտ անեն, խոսքը մարզկենտրոն գնալ-գալու մասին է. Կապանում պետք է լինել խիստ անհրաժեշտ կենսական հարցեր առաջանալու դեպքում:

> *Կարեւոր էր, որ շարունակեինք քաղաքի ախտահանման աշխատանքները: Ի դեպ, ամենօրյա ռեժիմով մարզկենտրոնում շարունակվում են նման աշխատանքները կոմունալ ծառայության կողմից, ախտահանվում են բնակելիների շքամուտքերը, վերելակները, սկզբնական շրջանում՝ նաեւ կանգառները, բայց հետո վերջիններիս ախտահանումը սկսեցին իրականացնել Արտակարգ իրավիճակների նախարարության տեղական կառույցների աշխատակիցները:*

Նաեւ հրահանգ է տրված՝ արտերկրից ժամանած եւ գյուղական բնակավայրեր մեկնել ցանկացողների մասին անհապաղ տեղյակ պահել համայնքապետարանին:

– Կուզեինք, որ ներկայացնեիք, թե համայնքապետարանի ենթակա հիմնարկներից որո՞նք են գործում, ընդհանրապես համայնքապետարանի աշխատակիցներից քանի՞սն են աշխատում:

– Երբ արտակարգ դրություն հայտարարվեց, եւ պարետի կողմից մտցվեցին սահմանափակումներ, ամբողջովին դադարեցրեցինք համայնքապետարանի ենթակառուցվածքների աշխատանքները: Մինչ այդ արդեն դադարեցվել էին նախակրթարանների, երաժշտական, արվեստի, գեղարվեստի դպրոցների աշխատանքները: Այսօր միայն կոմունալ տնտեսությունն է գործում, այն էլ՝ աղբահանության եւ սանմաքրման աշխատանքների առումով:

Կարեւոր էր, որ շարունակեինք քաղաքի ախտահանման աշխատանքները: Ի դեպ, ամենօրյա ռեժիմով մարզկենտրոնում շարունակվում են նման աշխատանքները կոմունալ ծառայության կողմից, ախտահանվում են բնակելիների շքամուտքերը, վերելակները, սկզբնական շրջանում՝ նաեւ կանգառները, բայց հետո վերջիններիս ախտահանումը սկսեցին իրականացնել Արտակարգ իրավիճակների նախարարության տեղական կառույցների աշխատակիցները:

Նաեւ ընդառաջում ենք նրանց, ովքեր դիմում են ախտահանություն կատարելու խնդրանքով: Այսպես ասեմ՝ երեք օրվա պարբերականությամբ քաղաքի բոլոր հասանելի հատվածներն ախտահանում ենք: Ընդ որում՝ ախտահանվում են քաղաքի մայթերն ու ճանապարհները:

– Մի հարցի պատասխան էլ ճշտենք, թեեւ Ձեր իրավասությունների շրջանակից դուրս է: Խոսքը մանրածախ առեւտրում տիրող իրավիճակի մասին է: Վերջին օրերին անընդհատ խոսակցություններ ենք լսում առաջին անհրաժեշտության որոշ ապրանքների թանկանալու մասին:

Արդյո՞ք հետեւում եք մանրածախ առեւտրի շուկայում գների փոփոխությանը:

– Համայնքապետարանի եկամտի բաժնի աշխատակիցներն ամենօրյա մոնիթորինգ են անցկացնում լայն սպառման առարկաների՝ ինչպես պարենային ապրանքների, այնպես էլ բանջարեղենի ու մրգերի գների նկատմամբ: Ընդ որում՝ առեւտրի խոշոր եւ միջին օբյեկտներում: Եվ ամեն օր հավաստի տեղեկություններ

էջ 6

– Գյուղացին այս տարեշրջանում ամենից առաջ, պարարտանյութի, սերմացուի կարիք է զգում: Ապահովվա՞ծ է հողի մշակն այդ ամենով:

– Մենք մի քաղաքականություն ենք որդեգրել, ըստ որի՝ գարնան-գյուղատնտեսական աշխատանքներին աշնանից ենք պատրաստվում: Մարզպետարանի գյուղատնտեսության եւ բնապահպանության վարչությանը համապատասխան հանձնարարականը դեռ աշնանն ենք տվել՝ ճշտելու՝ անհրաժեշտ նյութերից (պարարտանյութ, վառելիք, սերմացու) որքան է պետք համայնքներին, եւ գնային քաղաքականություն մշակելով՝ ստանալ դրանք: Կարծում եմ՝ այս պահին դժգոհություններ չունենք:

Նորից եմ փաստում՝ ներկայիս առաջնահերթ խնդիրը պարզելն է, թե ջերմաստիճանի անկումը եւ դրանով պայմանավորված ցրտահարությունն ինչ վնաս տվեցին ցանքսերին ու այգեգործական տնտեսություններին:

– Վերջին օրերին Երեւանի թերթերից մեկում հրապարակում կար այն մասին, որ Սյունիքի մարզի տարբեր բնակավայրերում հարյուրավոր ընտանիքներ օգնություն են ստացել՝ սննդի փաթեթների տեսքով, եւ դա իբր արվել է անանուն բարերարի կողմից:

– Անանուն օգնություն չի կարող լինել եւ չի եղել: Հստակ հանձնարարական ենք իջեցրել համայնքներին՝ բացի պետության սոցիալական աջակցությունից, եթե անհատ քաղաքացիներ, կազմակերպություններ բարեգործություն անելու մտադրություն ունենան, ապա պիտի համագործակցեն համայնքի հետ՝ հաշվի առնելով բնակչության կարիքները, թիրախային խմբերը՝ օգնությունը հասցեական կազմակերպելու համար:

Բայց եթե ասում եք՝ ինչ-որ անանուն բարեգործ, ապա դա լուրջ չէ: Համայնքներին հատկացված օգնության մասին տեղեկացվում ենք մենք, որի մասին էլ իրազեկ ենք դարձնում տարածքային կառավարման եւ զարգացման նախարարությանն ու հայկական միասնական տեղեկատվական կենտրոնին:

– Պարոն Պողոսյան, փորձենք գնահատել մարզի բնակիչների վարքն արտակարգ դրության պայմաններում: Ըստ Ձեզ՝ մարդիկ հետեւո՞ւմ են պարետատան, առողջապահության նախարարության կոչերին եւ հորդորներին:

– Արտակարգ դրություն հայտարարելուց հետո առաջին մեկ-երկու օրը ոչ լուրջ վերաբերմունքի դրսեւորումներ եղան:

Չեմ կարող ասել, որ հիմա իդեալական է այդ առումով: Բայց զգաստացան, պահի լրջությունը մարդկանց գերակշիռ մասը գիտակցեց, ինչի համար շնորհակալ ենք:

Միեւնույն ժամանակ հորդորում եմ, որ բոլորի մոտ լինի ողջամիտ անհանգստություն եւ ոչ թե խուճապ: Ավելի լավ է ողջամիտ հանգստություն, քան՝ անտարբերություն:

Յուրաքանչյուր ոք մի բան պիտի գիտակցի՝ տնից դուրս չգալով, մասնագետների եւ պատկան մարմինների խորհուրդ-պահանջները կատարելով՝ անձը ոչ միայն իրեն է ապահովագրում, այլեւ իր մերձավորին, ընկերոջը, հարազատին:

Զրույցը՝ Վահրամ Օրբելյանի

Գեւորգ Փարսյան. «Կապանի համայնքապետարանը գործում է իրավիճակի ամբողջ լրջության գիտակցումով եւ դրանից բխող պատասխանատվության զգացումով»

էջ 5 ենք ստանում:

Տեղեկացնեմ, որ թիվ մեկ սննդամթերքի՝ հացի առումով գնած չունենք: Սահմանափակումների առաջին երկու օրն ահազանգ ստացա, որ երկու հացարտադրող ցանկություն ունեն հացի գինը բարձրացնել: Այդ ժամանակ ինքս ինքնամեկուսացման մեջ էի եւ տնից էի աշխատում, զանգահարեցի հացաթխման արտադրամասերի տնօրեններին, հորդորեցի ձեռնպահ մնալ գները բարձրացնելուց, թեեւ ալյուրի գինը բարձրացել էր:

Վերջին շրջանում որոշակի բարձրացել է ոսպի եւ հնդկաձավարի գինը: Այսօր Կապանում հնդկաձավարն արժե 650-680 դրամ, թանկացել է 150 դրամով, ոսպը 100 դրամով է թանկացել, այն դեպքում, երբ Երեւանում հնդկաձավարը 800-900 դրամ է (հարցազրույցը կայացել է ապրիլի 8-ին, խմբ.):

Ճիշտ է, այդ հարցերը մեր իրավասությունների շրջանակից դուրս են, բայց քանի որ խնդիրն առնչվում է համայնքի բնակչության սննդապահովմանը, ապա չեն կարող մեր տեսադաշտից եւ մեր հետաքրքրության շրջանակից դուրս մնալ:

– Հերթական հարցս եւս Ձեր իրավասությունների շրջանակում չէ: Խոսքը Կապանի դեղատներում ախտահանիչ նյութերի (ալկոգել), դիմակների առկայության մասին է: Սկզբնական շրջանում դրանց սուր պակաս կար դեղատներում, իսկ հիմա:

– Այո, սկզբնական շրջանում ախտահանիչ նյութերի եւ պակաս, եւ գնած ունեցանք:

Ի դեպ, երեւույթը գրանցվեց ողջ հանրապետությունում:

Ձեր թվարկած պարագաների պահանջարկը կտրուկ մեծացավ, իսկ մատակարարումը նույն մակարդակին էր: Դեղատները չէին կարողանում եւ չէին կարող մարդկանց հարաճուն պահանջարկը բավարարել: Բարեբախտաբար եւ հանրապետությունում, եւ Կապանում կազմակերպվեցին դիմակների արտադրություն: Մեզանում նման նախաձեռնությամբ հանդես եկավ «Սոնատեքս» ընկերությունը, որին իմ շնորհակալությունն եմ հայտնում: «Սոնատեքսը» համայնքապետարանին անվճար հատկացրեց դիմակների որոշակի քանակություն: Այժմ այդ ապրանքների շուկայում գնած չկա:

– Պարոն Փարսյան, հնարավորության սահմաններում կարելի՞ է համայնքի մասշտաբով ներկայացնել կորոնավիրուսով վարակվածների, նրանց հետ շփվածների, մեկուսացվածների թիվը: Համենայն դեպս, Հայաստանի վարչապետը, հանրապետության լրատվամիջոցները նման թվեր հրապարակում են:

– Ունենք կորոնավիրուսով վարակված 15 անձ, որից մեկը բուժվել է, մեկուսացվածները շատ են, նրանց վերաբերյալ որեւէ ստույգ թիվ չեմ կարող ասել:

– Մեզանում, ինչպես արդեն նշեցիք, անհրաժեշտություն է ծագել առանձնացնել հյուրանոցներ, հյուրատներ՝ կորոնավիրուսով վարակվածների, նրանց հետ շփվածների համար: Կարողանո՞ւմ եք լուծում տալ այդ խնդրին:

– Ընդհանուր առմամբ նման անհրաժեշտություն առաջացավ վարակվածների հետ շփվածներին մեկուսացնելու առումով, որպեսզի նրանք մեկուսանային ոչ թե իրենց բնակարաններում, այլ հյուրատներում: Հատկապես նման խնդիր առաջ եկավ բուժաշխատողների առնչությամբ, ովքեր գործ էին ունեցել վարակվածների հետ:

Մենք ըստ պատշաճի լուծել ենք այդ հարցը:

Այժմ, բացի բուժաշխատողներից, հյուրատներում տեղավորելու խնդիր չկա:

– Պարոն Փարսյան, կառավարության աջակցության ծրագրերը որքանո՞վ են անդրադառնում համայնքի բնակչության եւ տնտեսավարող սուբյեկտների գործունեությանը:

– Տնտեսական ճգնաժամի մեղմման համար կառավարության կողմից ընդունվել է ինը փաթեթ: Դրանց կյանքի կոչման եւ հասցեականությունն ապահովելու վերահսկողությունն իրականացնում է կառավարությունը: Համայնքապետարանն այդ ամենում շատ անելիք չունի:

Համայնքապետարանը պարզապես ուղղորդում է այն տնտեսվարողներին եւ քաղաքացիներին, ովքեր դրա կարիքն ունեն եւ համապատասխանում են առաջադրված չափորոշիչներին ու կարող են ստանալ այդ աջակցությունը:

Ձեր հարցի առավել ամբողջական եւ առարկայական պատասխանը, այդուհանդերձ, ավելի ուշ կիմանանք, քանզի նոր-նոր են դրանք գործնականում իրականացվում:

– Երեւանի թերթերից մեկն օրերս փորձել էր անդրադառնալ մեր մարզին՝արձանագրելով, թե իբր Սյունիքում անտերություն է, բուժաշխատողները բողոքում են:

– Տեղյակ եմ այդ հրապարակմանը: Մատնանշված երկու դիտարկմանը, օգտվելով առիթից, կուզենայի անդրադառնալ:

Առաջինը Կապանի եւ կապանցու արժանապատվությանն առնչվող խնդիր է. իբր Գորիսը պատրաստ էր բուժաշխատողներին տեղ առաջարկել, իսկ ամբողջ Կապանում մեկը չկար, որ մի անկյուն հատկացներ:

Սուտ է...

Տեղ հատկացված է, եթե իսկապես ցանկություն ունեք, ապա եկեք եւ մնացեք:

Երկրորդ՝ իրականության հետ որեւէ աղերս չունի հրապարակման այն հատվածը, որում խոսվում է, թե իբր իմ ու փոխմարզպետ Նարեկ Բաբայանի հակամարտությունից տուժում է Կապանը:

Լիակատար անհեթեթություն է, անիմաստ, իրականության հետ կապ չունեցող ճամարտակություն:

Անկախ այն բանից, թե համայնքապետն ում հետ ինչ հարաբերություն ունի, հավատացնում եմ՝ կապանցին երբեւէ չի տուժի դրանից, ինքս նման բան թույլ չեմ տա, դա իմ գործելակերպից եւ պատկերացումներից դուրս է:

Նարեկ Բաբայանի հետ ունենք միանգամայն նորմալ, աշխատանքային հարաբերություններ: Եվ կապանցուն հուզող յուրաքանչյուր խնդիր արագ լուծում է ստանում նաեւ մեր համագործակցության շնորհիվ:

– Ի՞նչ կավելացնեիք ասվածին՝ այսօրվա իրավիճակով պայմանավորված:

– Կուզեի համայնքի բնակիչներն իմանային, որ համայնքապետարանը գործում է իրավիճակի ամբողջ լրջության գիտակցումով եւ դրանից բխող պատասխանատվության զգացումով: Ձգտում ենք առավելագույնն անել, որպեսզի որեւէ մեկի կյանքին ու առողջությանը վտանգ չսպառնա, որպեսզի ժամ առաջ վերականգնվի համայնքային բնականոն կյանքը:

Թեպետ 14 օր ինքնամեկուսացած էի, բայց տնից աշխատում էի: Իսկ հիմա, փառք Աստծո, այդ ամենը հետեւում է մնացել եւ օրվա բոլոր ժամերին մեր ժողովրդին պատուհասած դժվարությունների հաղթահարման առաջին գծում եմ:

Բայց արհավիրքի դեմ պայքարում մեր հաջողությունն իսկապես անկասելի կլինի, եթե մենք ավելի համախմբվենք դժվարին այս օրերին եւ յուրաքանչյուրս կատարենք այն հորդոր-պահանջները, որ ներկայացնում են պարետատունն ու հանրապետության մյուս պատկան մարմինները:

Զրույցը՝ Վարիրամ Օրբելյանի

Սյունյաց թեմի առաջնորդական տեղապահ հոգեշնորհ Տեր Մակար վարդապետ Հակոբյանի ուղերձը՝ նոր տիպի կորոնավիրուսի առնչությամբ

Սիրելի՛ սյունեցիներ, հավատացյալ ժողովուրդ, եղբայրներ եւ քույրեր

Այս օրերին, երբ ողջ մարդկությունն ու հայ ժողովուրդը գտնվում են դժվարին կացության մեջ եւ կանգնած են կյանքի չարաղետ անակնկալների հաղթահարման ծանր մարտահրավերի առջեւ, հեշտ չէ հավաքել ուժ ու եռանդ՝ չհուսահատվելու, չտկարանալու, չշփոթվելու համար:

Այո, տխուր է պահը: Սակայն տագնապալի այս իրավիճակում ժողովուրդները պետք է ապացուցեն իրենց ազգային գերագույն շահերի, սոցիալական պատասխանատվության գիտակցումն ու իրենց մտածումների եւ զգացումների ողջամտությունը:

Պատմությունը ցույց է տվել, որ մեր ժողովուրդը չգիտի հուսահատվել, չգիտի տկարանալ, ընդհակառակը, փորձության օրերին դառնում է մեկ հոգի՝ համախմբված մեկ նպատակի շուրջ՝ ցանկացած դժվարություն հաղթահարելու վճռականությամբ:

Ահա այս գիտակցումով է, որ դիմում եմ ձեզ:

Կոչ եմ ուղղում մեր ժողովրդի բոլոր զավակներին՝ մեծերին եւ փոքրերին, տղամարդկանց ու կանանց, ծերերին, մանուկներին՝ յուրաքանչյուրդ ձեր պատասխանատվության ու մասնակցության բաժինը բերեք համավարակի հաղթահարման գործում՝ խստորեն հետեւելով աղետի կանխարգելման համար թելադրվող բոլոր հրահանգներին: Միաժամանակ անվերապահ նվիրումով ու բարձրագույն աստիճանի գիտակցությամբ լծվեք ձեր ուսերին դրված պարտավորությունների կատարմանը, հոգացեք ձեր հոգեւոր եւ մարդկային կարիքները:

Ամենքս մեր ջանքը հայրենի պետության ջանքին մեկտեղելու դեպքում, հավատում եմ, մոտ ապագայում կկարողանանք վերադառնալ կյանքի բնականոն ընթացքին:

Հորդորում եմ նաեւ շարունակել պահպանել փոխադարձ հարգանք միմյանց հանդեպ, ոչ մի դեպքում թույլ չտալ թշնամանք վարակիրների, նրանց ընտանիքի անդամների նկատմամբ՝ գիտակցելով, որ մեզնից որեւէ մեկն ապահովագրված չէ վարակիր դառնալուց:

Թո՛ղ տերը բժշկություն պարգեւի ապաքինման կարոտ մեր զավակներին:

Սիրելի՛ հավատացյալներ

Ձեր ամենօրյա կյանքում ջերմեռանդորեն աղոթեք ու փրկություն հայցեք Աստծուց, որ այս փորձության հաղթահարման համար տարվող ջանքերն իրենց պտուղները տան, քանզի ասված է. **«Ամեն ժամ պետք է աղոթել եւ չձանձրանալ»** (Ղուկ. 18: 1):

Մնում եմ աղոթող, որ մեր հայրենիքն ու աշխարհը կարճ ժամանակ անց ազատվեն համավարակի վտանգից ու նրա հետեւանքներից:

Ամեն: ■

Ցուցաբերենք մեր ազգին բնորոշ դրական հատկանիշները՝ պատասխանատվության զգացում, համբերություն եւ փոխըմբռնում



Սիրելի՛ հայրենակիցներ

Ամեն անգամ, երբ բնական արհավիրքը կամ թշնամին չոքել է մեր դռանը, հայ ժողովուրդը կարողացել է ի մի բերել մեր ազգին բնորոշ բոլոր դրական հատկանիշները՝ համբերություն, միասնություն, կենսունակություն, ուժ, կամք, կարգապահութուն եւ, իհարկե, ճկուն խելք ու դրանցով հաղթել չարիքին:

Արդ, չարն արդեն ոչ թե մեր շեմին է, այլ տանը: Եկել է պահը՝ իրական կյանքում փորձարկելու թվարկած հատկանիշները:

Այսօր մեզանից յուրաքանչյուրը պոտենցիալ հիվանդ պացիենտ է, բայց գործնականում նաեւ այդ հիվանդին բուժող բժիշկ:

Յուրաքանչյուրս մեր ապրած կյանքից տասնյակ օրինակներ կարող ենք բերել, թե ինչերի կարելի է հասնել կարգապահությամբ:

Նայենք համաճարակն արտացոլող աշխարհի քարտեզին, եւ կնկատենք, որ այն ազգություն, մաշկի գույն ու կրոն չի ճանաչում: Բայց հնարավոր չէ չնկատել, որ համեմատաբար բարվոք վիճակում են կարգապահ ազգերի համբավ ունեցող երկրները՝ Չինաստան, Ճապոնիա, Գերմանիա ...

Եկեք կարգապահ ու համբերող լինենք, ժամանակ տանք մեր իշխանություններին ու առողջապահության պատասխանատուներին, թեեւ ուշացումով, խելամտորեն կատարելու իրենց աշխատանքը:

Հնարավորություն տանք մեր ազգի պայծառ ուղեղներին՝ նորից փայլատակելու ու զարմացնելու աշխարհին:

Հիշենք, որ մարդկության երկրորդ ծնունդը սկսվել է սուրբ լեռան ստորոտից, որ մենք անմիջականորեն սերում ենք Նոյ նահապետից, եւ ինչպես դասականն է ասում՝ «Մեր ոտքերը դեռ թաց են ջրհեղեղի ջրից»:

Մնա՛նք տանը: Դրանով նախեւառաջ ինքներս կօգնենք մեզ, ապա հերոսական գործ կատարող մեր բժիշկներին, ինչպես եւ պետական ու հասարակական կազմակերպություններին, ովքեր կոչված են կազմակերպելու մեր ընթացքը համաճարակի այս օրերին:

Համբերություն եւ առողջություն բոլորիս:

Ռեդիկ Հայրապետյան
Գորիս քաղաքի բնակիչ

Հեռավար ուսուցում. հայացք ներսից

ԼՈՒՍԻՆԵ ԲԱԼԱՅԱՆ
Կապանի թիվ 7 հիմնական դպրոցի ուսուցչուհի

Հեռավար կրթության համակարգն աշխարհում տարածված ուսուցման ձեւ է, որի միջոցով սովորողները ստանում են ինչպես հիմնական, այնպես էլ լրացուցիչ կրթություն, լրացնում որոշակի կրթական բացթողումներ, մասնակցում մասնագիտական տարաբնույթ դասընթացների եւ ձեռք բերում լրացուցիչ հմտություններ ու գիտելիքներ:

Արտակարգ դրությամբ պայմանավորված՝ մեր երկրի գրեթե բոլոր ուսումնական հաստատությունները սկսել են կրթական գործընթացները կազմակերպել հեռավար կրթության միջոցով, որն այսօր միակ հնարավոր միջոցն է: Եթե սկզբում այն տարերային բնույթ էր կրում, ապա այսօր, հիմնականում արդեն համակարգված ձեւով, լրացնում է բացթողումները, եւ ուսումնական պլաններին համապատասխան կազմակերպվում է ուսուցման գործընթացը: Մանկավարժներն օգտագործում են համացանցի տարբեր հարթակներ՝ ZOOM, Viber, Facebook, էլեկտրոնային փոստ, տարբեր կրթական ծրագրեր՝ Dasaran.am, Իմ դպրոց,Quizizz. com, եւ փորձում հնարավորինս արդյունավետ աշխատել՝ ապահովելով նաեւ հետադարձ կապ:

Մենք հայտնվել ենք մի իրավիճակում, որ, չունենալով այսպիսի հարթակներում դասավանդելու հմտություններ, կարճ ժամանակում կարողացանք տիրապետել ՏՀՏ գործիքակազմին, մեթոդներին: Դրանում մեզ օգնեցին ոլորտի մասնագետները՝ իրենց պատրաստած ուսումնական տեսանյութերով, հղումներով, օգտակար խորհրդատվությամբ:

Ներդպրոցական համագործակցության, կատարված աշխատանքներին իրազեկվելու եւ աշխատանքները համակարգելու նպատակով ստեղծվեցին փակ խմբեր՝ տնօրենին կից խորհուրդ՝ փոխտնօրենների եւ մեթոդմիավորման նախագահների, նաեւ դասղեկների ու ծնողների մասնակցությամբ: Երկխոսության այդ հարթակներն ունեն մի նպատակ՝ օգտակար լինել եւ յուրաքանչյուր պահի պատրաստ լինել օգնել աշակերտին՝ շարունակելու սովորել գործընթացը, համոզելու, որ կարող են նաեւ ինքնուրույն հաղթահարել ծագած դժվարությունները:

Հեռավար ուսուցման դրական կողմերի մասին եւս մի քանի նկատառում: Շատ կարճ ժամանակամիջոցում եւ՛ ուսուցիչները, եւ՛ աշակերտները զարգացրին թվային տեխնոլոգիաներին տիրապետելու գիտելիքներն ու կարողությունները: Աշակերտների սկսեց զարգանալ ինքնուրույն գործունեության, իսկ ուսուցիչների շրջանում՝ ինքնակրթության, մասնագիտական զարգացման եւ փորձի փոխանակման հմտությունը:

Ծնողներն ակամա դարձան կրթական գործընթացի մասնակից, քննադատ եւ գնահատող:

Բացասական կողմերից են կապի որակը, ոչ բոլորին հասանելի լինելը: Տեղյակ եմ, որ բոլոր դասղեկները հնարավոր միջոցներով բացահայտում են ինչ-ինչ պատճառներով բացակա աշակերտներին ու փորձում լրացնել բացթողումները:

Դեռեւս այնքան էլ արդյունավետ չէ գնահատման համակարգը, քանի որ անդրադարձի եւ վերլուծության համար ժամանակ շատ է պահանջվում: Կարծում եմ՝ այս իրավիճակում կարելի է շեշտադրել ուսուցանումը, անհասկանալի հարցերի մեկնաբանությունը, ինքնուրույն կատարված աշխատանքների համատեղ վերլուծությունը, սխալների շուրջ աշխատանքը, ինչպես նաեւ արժեւորել համատեղ սովորելու գործելակերպը:

Հեռավար ուսուցման առաջին արդյունքների նախնական ամփոփումն ամբողջացնելու համար հարկ եմ համարում ուշադրություն հրավիրել մի քանի դիտարկման վրա նույնպես:

Հարգելով երեխայի կրթություն ստանալու իրավունքը, ինչպես նաեւ անձնական կյանքի անձեռնմխելիությունը՝ դասընթացների ժամանակ ապահովել լռություն, բացառել ընտանիքի անդամների անհարկի միջամտությունները, թույլ տալ երեխային սովորել ինքնուրույն: Ճիշտ է՝ ծնողները սկսում են ավելի լավ ճանաչել իրենց երեխաներին եւ փորձում օգտակար լինել, սակայն, կարծում եմ, հեռավար կրթությունն ուսուցչի եւ աշակերտի համատեղ գործունեությունն է:

Սթրեսային իրավիճակ երեխաների մոտ, երբ ծնողները սկսում են համեմատել իրենց երեխային ուրիշների հետ, նսեմացնել արժանապատվությունը, քննադատել, բարկանալ՝ ոգեւորելու փոխարեն:

Տնային հանձնարարությունների քանակը. այս հարցը միշտ էլ եղել է քննարկման նյութ, ուստի կարելի է հնարավորինս պլանավորել առաջադրանքների քանակն ու տեսակը՝ հաշվի առնելով դասացուցակի ծանրաբեռնվածությունը:

Ուսուցչի աշխատանքի թափանցիկությունը. որքան էլ ջանք է թափում ուսուցիչը, որպեսզի հետաքրքիր մատուցի դասանյութը կամ գնահատման հարցում լինի օբյեկտիվ, այնուամենայնիվ, հրապարակային քննարկման են դրվում կարծիքներ:

Համակարգչի եւ համացանցի թողած ազդեցությունը երեխաների, ինչու չէ, նաեւ ուսուցչի առողջության վրա. այս պայմաններում երեխաներն օրվա մեծ մասն անց են կացնում համակարգչի առջեւ, ինչը շատ մտահոգիչ է:

Հաշվի առնելով ներկայիս մարտահրավերները, կարծում եմ, ժամանակն է մեր երկրում ունենալ մանկավարժների՝ նախարարության մակարդակով կազմակերպված հեռավար հաղորդակցման միասնական հարթակ, էլեկտրոնային դասերի պլանավորված պաշարներ, որպեսզի համացանցը չհեղեղվի կամայական, տարաբնույթ, չլիցենզավորված ուսումնական նյութերով, դասապլաններով, տեսադասերով:

Եվ վերջում՝ շնորհակալ լինենք միմյանց, շնորհակալ լինենք եւ՛ ուսուցիչներին, եւ՛ ծնողներին, եւ՛ աշակերտներին՝ այս փորձառություն-մարտահրավերին արժանապատիվ դիմակայելու եւ աշխատանքները պատշաճ կազմակերպելու համար: ■

Կարեն Մելքոնյան. «Յուրաքանչյուրը պիտի գիտակցի, որ իրեն պաշտպանելով՝ շրջապատի մարդկանց է պաշտպանում»

Հարցազրույց «Կապանի բժշկական կենտրոն» ՓԲԸ տնօրեն Կարեն Մելքոնյանի հետ

– Պարոն Մելքոնյան, կխնդրեինք ներկայացնել նոր տիպի կորոնավիրուսով տարածվածության հետեւանքով ստեղծված իրավիճակի ընդհանուր պատկերը:

– Նախ ասեմ, որ Կապանի բժշկական կենտրոնը հանրապետության այն տասը բուժհիմնարկների ցանկում է, որոնք սպասարկում են նոր ենթատեսակի կորոնավիրուսով վարակված հիվանդներին: Կապանի բժշկական կենտրոնն ուներ վիրաբուժական առաջին բաժանմունք, որտեղ որոշ աշխատանքներ կատարելուց հետո արդեն տրամադրված է այդ հիվանդների բուժմանը: Ըստ ամենայնի՝ դա ինֆեկցիոն նոր բաժինն է՝ 50 մահճակալով: Հուսով ենք, որ այդքան պացիենտ չենք ունենալու, բայց պիտի պատրաստ լինենք բոլոր տեսակի սցենարներին: Նոր բաժինը ներառում է վերակենդանացման բաժանմունք՝ չորս մահճակալով, ինտենսիվ բլոկ՝ երեք մահճակալով, մյուս մահճակալները ստացիոնար բուժմանն են տրամադրված: Մեր բժշկական կենտրոնին «Հայաստան Կապան»-ի եւ այլ կազմակերպությունների մեկնած ձեռքի շնորհիվ ունեցանք անհրաժեշտ ամեն ինչը, որով հնարավոր է նորմալ բուժսպասարկում իրականացնել:

Այժմ անդրադառնանք բուն խնդրին. նախեւառաջ մարդիկ շատ գիտակցաբար պիտի ընկալեն ստեղծված իրավիճակը, իրենք իրենցով պայքարեն երեւույթի դեմ, չթողնեն, որ վարակվածությունը հասնի կրիտիկական նիշի եւ նոր տեղափոխվեն հիվանդանոց: Ասեմ, որ ծանր դեպքեր չենք ունեցել, եթե կարճ ձեւակերպեմ՝ կառավարելի վիճակ է այս պահին:

– Կորոնավիրուսով վարակվածությունն ընդհանուր առմամբ ունի ախտանիշներ, բայց երբեմն ընթանում է մեղմ ախտանիշներով կամ առանց ախտանիշների: Եթե մարդը զգում է վարակվածությունը, ո՞ւմ պիտի դիմի:

– Ընտանեկան բժշկին, առաջնային օղակի բժշկին:

– Կորոնավիրուսով վարակվածների հետ նաեւ լինում են շփված անձինք, այսպես կոչված կոնտակտավորներ, որտե՞ղ են նրանք մեկուսացվում:

– Եթե մոտիկ կոնտակտավոր են, մեկուսացվում են տան պայմաններում, եւ այդ պահից սկսած հսկողության մեջ են լինում առաջնային օղակի բժշկի կողմից: Օրվա ընթացքում մի քանի անգամ կապ է հաստատվում իրենց հետ, ճշտում են՝ ջերմություն ունե՞ն, թե՞ ոչ: Իրենք էլ, որեւէ խնդիր ծագելու դեպքում, միանգամից դիմում են բժշկի:

– Իսկ որո՞նք են կորոնավիրուսով վարակվելուց հետո ի հայտ եկող ախտանիշները:

– Դա ջերմության ի հայտ գալն է, հետագայում չոր հազը, երբ վիրուսն արդեն անցնում է շնչուղիներ, կարող է առաջանալ հեւոց, թոքաբորբ, այսքանը: Սակայն կարող է սիմպտոմիկա չունենալ, բայց անձնավորությունը կարող է լինել վարակակիր:

– Եթե մարդը ցանկանում է թեստավորվել, որտե՞ղ պիտի անցնի թեստավորում:

– Հիվանդությունների վերահսկողության կանխարգելման Ազգային կենտրոնի Սյունիքի մասնաճյուղն է (ք. Կապան) այդ գործառույթն իրականացնում: Անհրաժեշտության դեպքում նրանք, ովքեր ունենում են ջերմություն, հազ, վիրուսակրի հետ շփում, կարող են թեստավորում անցնել: Առայժմ թեստավորման հարցում խնդիրներ չեն ծագել, թեեւ նորից ասեմ, որ մեր բուժհաստատությունը չի

էջ 8

Լրացավ Արտյոմ Թադեւոսյանի 70-ամյակը

Մարտի 31-ը Սյունիքի մարզի առողջապահական համակարգի երախտավորներից մեկի՝ Արտյոմ Թադեւոսյանի ծննդյան օրն է:

Տասնհինգ տարի (1998-2013 թթ.) գլխավորել է Սիսիանի շրջանային հիվանդանոցը, մոտ քառասուն տարի եղել (որոշ ժամանակ՝ համատեղությամբ) այդ հիվանդանոցի վիրաբուժության բաժանմունքի վարիչ:

Նրա պաշտոնավարման տարիներին Սիսիանի հիվանդանոցում կատարվեցին արմատական փոփոխություններ՝ հոգուտ տարածաշրջանի բնակչության: Իսկ վիրաբուժության ոլորտում... Միայն Արցախյան հերոսամարտի օրերին հաջողությամբ իրականացրեց 350-ից ավելի վիրահատություն:

Առողջապահության համակարգում եւ հատկապես վիրաբուժության ոլորտում մեծ փորձ ունեցող Արտյոմ Թադեւոսյանն այսօր էլ մասնագիտական ակտիվ կյանքով է ապրում: Ներկայումս Երեւանի «Արմենիա» բժշկական կենտրոնի շտապ օգնության եւ անհետաձգելի բժշկական ծառայության ղեկավարն է:

Արտյոմ Թադեւոսյանի հրաշալի ընտանիքը բժիշկների ընտանիք է. կինը Սյունիքում համբավաշատ սրտաբան Սվետա Իսախանյանն է (հիմա՝ «Արմենիա» բժշկական կենտրոնի սրտաբան), երկու զավակը՝ նույնպես բժիշկ:

Հայրենի ու նվիրական երկրամաս Սյունիքին եւ հատկապես Սիսիանին մատուցած ծառայության համար քանիցս գնահատվել է նրա վաստակը, 2010-ին էլ արժանացել է «Սիսիանի պատվավոր քաղաքացի» կոչմանը:

Հարգելի Արտյոմ Ասլանի

«Սյունյաց երկիրը» շնորհավորում է Ձեզ՝ ծննդյան 70-ամյակի կապակցությամբ ու մաղթում հաջողություններ եւ՛ ընտանիքում, եւ՛ մասնագիտական գործունեության ասպարեզում:

Տեղյակ ենք, որ Ձեր մանկությունն անցել է Սյունյաց աշխարհի մեծ առաքինարան Թանահատի վանքի մերձակայքում, ինչով եւ Դուք հպարտանում եք:

Ձեր վաստակաբեռ հոբելյանի օրը մեր հայացքը կրկին ուղղենք այդ չքնաղ տաճարին եւ բարեխոսություն խնդրենք առ Աստված, որ հայ ժողովուրդը հնարավորինս քիչ կորուստներով դուրս գա Երկիր մոլորակին պատուհասած այս վիճակից:

Վստահ ենք, որ վերջին մաղթանքն առանձնապես ախորժելի է Ձեզ ու Ձեր գործընկեր բժիշկներին, ուստի եւ փորձեցինք հենց այդ կերպ Ձեր հոբելյանի օրվանն առնչվող մեր մտածումները շաղախել-ծառայեցնել հանուրին, ինչ սկզբունքով եւ ապրել եք անցած տարիներին:

Սամվել Ալեքսանյան
31 մարտի 2020

Պարետը նոր որոշում է կայացրել տեղաշարժի եւ տնտեսական գործունեության տեսակների սահմանափակումների մասին

ՀՀ փոխվարչապետ, ՀՀ պարետ Տիգրան Ավինյանը Ֆեյսբուքի էջում տեղեկացրել է ազատ տեղաշարժի իրավունքի եւ տնտեսական գործունեության տեսակների նկատմամբ ժամանակավոր սահմանափակումներում ընդունված որոշման մանրամասները:

«Սիրելի՛ հայրենակիցներ,

Այսօր ընդունված որոշմամբ (https://www.gov.am/files/docs/4009.pdf) որոշ փոփոխություններ են կատարվել ազատ տեղաշարժի իրավունքի եւ տնտեսական գործունեության տեսակների նկատմամբ ժամանակավոր սահմանափակումներում:

Ապրիլի 13-ից հանվելու են տնտեսական գործունեության որոշ տեսակների նկատմամբ գործող սահմանափակումները:

Մասնավորապես, թույլատրվելու է տնտեսական գործունեությունը՝

Մշակող արդյունաբերության հատվածում՝

12 – Ծխախոտային արտադրատեսակների արտադրությունը,

23.5 – Ցեմենտի, կրի, գիպսի եւ գաջի արտադրությունը,

23.6 – Բետոնից, ցեմենտից եւ գիպսից շինվածքների արտադրությունը,

25.11 – Մետաղե կոնստրուկցիաների եւ դրանց մասերի արտադրությունը,

Շինարարության հատվածը գրեթե ամբողջությամբ, բացի՝

43.3 – Շինարարության ավարտական փուլի աշխատանքների,

Մասնագիտական, գիտական եւ տեխնիկական գործունեության հատվածում՝

71.12 – Ճարտարագիտական գործունեությունը եւ դրա հետ կապված տեխնիկական խորհրդատվությունները:

Կարեն Մելքոնյան. «Յուրաքանչյուրը պիտի գիտակցի, որ իրեն պաշտպանելով՝ շրջապատի մարդկանց է պաշտպանում»

Հարցազրույց «Կապանի բժշկական կենտրոն» ՓԲԸ տնօրեն Կարեն Մելքոնյանի հետ

էջ 7 իրականացնում այդ գործառույթը:

– **Իհարկե, առաջնային է նաեւ վարակված պացիենտների սննդի կազմակերպումը:**

– Հիվանդներն օրական երեք անգամ սնունդ են ստանում, նաեւ նրանց սպասարկող անձնակազմը, բժշկական կենտրոնը պայմանագիր է կնքել մատակարարող կազմակերպության հետ: Հուսանք, որ ներկայիս պատկերը չի զարգանա:

– **Պարոն Մելքոնյան, այսօր աշխարհն է ծափահարում բժիշկներին՝ իրենց կատարած ռիսկային աշխատանքի համար:**

– Իհարկե, առաջին ռիսկային խումբը բժիշկներն են, ովքեր շփում են ունենում հիվանդների հետ: Նրանք էլ պիտի խստորեն հետեւեն ինչ-ինչ հրահանգների, որ կոնտակտը լինի նվազագույն, թեպետ ասեմ, որ ապահովված են անհրաժեշտ պաշտպանիչ հանդերձանքով:

– **Ինչ խոսք, որ կորոնավիրուսի վարակվածության աստիճանը կախված է յուրաքանչյուրիս վարքից:**

– Զրույցի սկզբում այդ մասին մասամբ նշեցի: Յուրաքանչյուրը պիտի շատ լուրջ մոտենա խնդրին, առօրյա կյանքում հետեւի այն խորհուրդներին եւ հորդորներին, որ փոխանցում են ՀՀ առողջապահության նախարարությունը, մյուս մարմինները: Միայն դրանով ահագին խնդիրներ կլուծենք: Դիմակ կրել, հետեւել հիգիենայի կանոններին, չմասնակցել մասսայական միջոցառումներին, այս ամենին չհետեւելը հանգեցնում է նրան, ինչ կատարվում է աշխարհով մեկ:

– **Ի դեպ, դիմակ կրելու մասին, այս խնդրում, կարծես, իրարամերժ կարծիքներ կան, ոմանք հարցնում են՝ դիմակ կրելն օգո՞ւտ է, թե՞ վնաս:**

– Կարծում եմ, որ մարդը տնից դուրս գալուց հետո դիմակ պիտի կրի: Չգիտես՝ որ պահին ում հետ շփում կունենաս: Բացի այս՝ ձեռքերը շփում չպիտի ունենան դեմքի հետ, սա եւս շատ կարեւոր հանգամանք է, քանի որ վիրուսը կարող է մնալ դեմքին, հետո անցնել բերանի խոռոչ եւ իջնել դեպի ստորին շնչուղիներ:

– **Ի՞նչ կավելացնեիք ասվածին որպես զրույցի ավարտ:**

– Առաջին խորհուրդս է խստորեն հետեւել հիգիենայի կանոններին: Երկրորդ՝ որեւէ կասկած ունենալու դեպքում անմիջապես դիմել բժշկին, չդիմելու դեպքում խնդիրն ավելի է բարդանալու:

Զրույցը՝ Վահրամ Օրբելյանի

Կապանցի 7-ամյա փղային Մոսկվայում վիրահատել են. մանրամասներ

Դավիթի համար դժվար է ինքնուրույն տեղաշարժվելը, սակայն բժիշկները նշում են, որ վիրահատությունը բարեհաջող է անցել:

Կապանի բնակիչ, 7-ամյա Դավիթ Ավագյանին, ով Մոսկվա էր տեղափոխվել, բարեհաջող վիրահատել են Նյարդավիրաբուժության ԳՀԻ-ում: Տեղեկությունը հաղորդում է RT-ն:

Մարտի սկզբին տղան անսպասելիորեն վատացել է: Նրա մոտ գլխուղեղի ուռուցք են հայտնաբերել, որի չափերը 3.5 սմ-ի էին հասնում: Հայ բժիշկների խոսքով՝ ցանկացած պահի տղայի մոտ կարող էր սրտի կանգ առաջանալ: Նրան շտապ վիրահատություն էր անհրաժեշտ, որը կարող էին անել Մոսկվայում կամ Գերմանիայում: Նշված ժամկետներում Գերմանիա մուտք գործելը հնարավոր չէր, իսկ Մոսկվայում ընտանիքը հարազատներ ունի:

Դավիթի հարազատները դիմել էին Մոսկվայի Ն.Ն. Բուրդենկոյի անվան նյարդավիրաբուժության ինստիտուտ:

Սակայն մինչ Դավիթի ընտանիքը փաստաթղթեր էր պատրաստում, Ռուսաստանը կորոնավիրուսի համավարակի պատճառով սահմանափակումներ մտցրեց երկիր մուտք գործող օտարերկրացիների համար:

Դավիթի մեկնելու թույլտվությունը ստացվել է RT հեռուստացանցի ջանքերի շնորհիվ, որը դիմել էր ՌԴ ԱԳՆ, որպեսզի նրանք կապ հաստատեն հայ գործընկերների հետ եւ փրկեն երեխայի կյանքը, քանի որ արդեն ժամերի հաշվարկ էր գնում:

«Վիրահատությունն արվեց: Այն կատարեց Յուրի Կուշելը: Ամեն ինչ բարեհաջող անցավ, հաջորդ օրն արդեն երեխային վերակենդանացման բաժանմունքից սովորական հիվանդասենյակ են տեղափոխել», – նշված է հրապարակման մեջ:

RT-ի հետ զրույցում տղայի ազգական Աննա Գրիգորյանն ասել է, որ Դավիթը դեռ շատ թույլ է, նա ուժեղ ցավեր ունի: Սակայն նա իրեն ձիգ է պահում. ներարկումների ժամանակ լաց չի լինում, ամեն ինչ լուռ է տանում, թեեւ դա նրա համար դժվար է:

Դավիթի մայրը նրա հետ հիվանդանոցում է: Դա անհրաժեշտ է, քանի որ տղան ինքնուրույն ոչինչ չի կարող անել:

«Նա չի տեղաշարժվում, չի կարող կանգնել, չի կարող գնալ լվացվելու, նրան պետք է գրկած տանել», – ասում է Գրգորյանը:

Եթե տղայի վիճակը թույլ տա, նրան ու իր մայրիկին կարող են տուն ուղարկել նաեւ մինչեւ հյուսվածաբանական վերլուծության արդյունքների պատրաստ լինելը:

7-ամյա Դավիթ Ավագյանը ծնողների ու ավագ քրոջ հետ ապրում է Սյունիքի մարզի Կապան քաղաքում:

armeniasputnik.am

56 նոր պլանշետ Սյունիքի մարզի դպրոցների աշակերտների հեռավար կրթության հասանելիությունն ապահովելու համար

Կրթության, գիտության, մշակույթի եւ սպորտի նախարարությունը Սյունիքի մարզպետարանին է հատկացրել 56 նոր պլանշետ՝ Ucom ինտերնետային sim-քարտերով (մեկամսյա անվճար բաժանորդագրությամբ), որոնք մարզպետարանի համապատասխան ստորաբաժանման կողմից տրամադրվում են մարզի դպրոցներին՝ հեռավար կրթության հասանելիությունն ապահովելու նպատակով: Այդ մասին Ֆեյսբուքի էջում տեղեկացրել է Սյունիքի մարզպետի տեղակալ Նարեկ Բաբայանը:

Նա նշել է, որ դպրոցները դրանք ժամանակավորապես կտրամադրեն տեխնիկական միջոցներ չունեցող, հեռավար կրթությունից դուրս մնացած, երեք եւ ավելի դպրոցահասակ երեխաներ ունեցող ընտանիքներին՝ երեխաների հեռավար կրթությունն անխափան կազմակերպելու նպատակով: Այնուհետեւ պլանշետները կվերադարձվեն դպրոցներին՝ հետագա տնօրինման նպատակով:

Փոխմարզպետի խոսքով՝ գործընթացը կկրի շարունակական բնույթ:

Սյունյաց Երկիր

ՀԻՄՆԱԴԻՐ ԵՎ ՀՐԱՏԱՐԱԿԻՉ
«ՍՅՈՒՆՅԱՑ ԱՇԽԱՐՀ»
ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ

Գլխավոր խմբագիր՝
ՍԱՄՎԵԼ ԱԼԵՔՍԱՆՅԱՆ

Հասցե՝ Կապան, Շահումյան 20/32:
Հեռ.՝ **(0285) 5 25 63,**
(091) 45 90 47,
(077) 45 90 47:
էլ.փոստ՝ syuniacyerkir@mail.ru
էլ.կայք՝ www.syuniacyerkir.am

Թղթակցությունները չեն գրախոսվում եւ հեղինակներին չեն վերադարձվում: Խմբագրության եւ հեղինակների կարծիքները կարող են չհամընկնել: Նյութերը ներկայացնել մեքենագիր վիճակում:

«ԳՈՎԱԶԴ – ԾԱՆՈՒՑՈՒՄ»
բաժնում տպագրվող նյութերի համար խմբագրությունը պատասխանատվություն չի կրում:

Հղումը «Սյունյաց երկրին» պարտադիր է:

® նշանի տակ տպագրվում են գովազդային նյութեր:
Գրանցման վկայականը՝ 01Մ 000231:
Թերթը տպագրվում է «Տիգրան Մեծ» հրատարակչության տպարանում:
Հասցեն՝ ք. Երեւան, Արշակունյաց 2:

Ծավալը՝ 2 տպագրական մամուլ:
Տպաքանակը՝ 1000, գինը՝ 100 դրամ:
Ստորագրված է տպագրության 15.04.2020թ.: